



ԱԶՈՎ-ՍԵՎԵՐՈՎԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՆԻ  
ՅԵՎ ԴՆԵՊՐՈՊԵՏՐՈՎՇԵՆԱՅԻ

ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՅԵՎ ՍՊՎՀՈԶՆԵՐԻ  
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑԱԿՅՈՒԹՅԱՆ

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

338.1

Ա-25

ՅԵՐԿՐԱՑԻՆ ՀՐԱՄԱՐԾԿՉՈՒԹՅՈՒՆ — 1936

17 FEB 2010

36-Ն  
ՀՀ1059

Պրոլետարիատ բոլոր յերկրների, միացնե՛ք

338.1  
Ա-25

ԱԶՈՎ-ՍԵՎԵՐՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՆԻ  
ՅԵՎ ԴՆԵՊՐՈՊԵՏՐՈՎՇԴԻՆԱՅԻ  
ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՅԵՎ ՍՈՎԿՈԶՆԵՐԻ

**ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ**



ԱԶՈՎ-ՍԵՎԵՐՈՎՅԱՆ ՀՐԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
ԽՈՍՀՈՎ-ԴԱՆ 1936

Բ. Պ. ՇԵԲՈԼԴԱՅԵՎ

ՀԱՄԿԿ (բ) ԱԶՈՎ - ՍԵՎՅՈՎ ՑԱՆ  
ՅԵՐԿՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՑԻ ՔԱՐՏՈՒՂԱՔ

ԴՆԵՊՐՈՊԵՏՐՈՎԱԿԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ  
ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆՔ

Դնեպրոպետրովցիները խնդիր են առաջադրել հայահատիկային կուլտուրաների բերքը 1936 թվին մի հեկտարից հասցնել 12 ցենտների։ Ազով-Մածովյան յերկրամասի համար դա նշանակում է 4,5 ցենտներով ավելացնել բերքն անցյալ տարվա համեմատությամբ։ Շուտ լուրջ, բայց իրագործելի խնդիր ե այս, վորով հետև աշխանացանի մոտավորապես կեսը ցանված և ցելերում, խոզանավար և արված 1.700 հազար հեկտար և աշխանավար՝ 4.100 հազար հեկտար։ Մենք հույս ունենք, վոր այս միջոցներով վոչ միայն բարելավեցնեք հողի մշակումը, այլ և նշանավոր չափով վոչնչացրինք կոլխոզային և սովխոզային դաշտերի մոլախոտերը։ Բերքի այդքան ավելացում ձեռք բերելու համար անհրաժեշտ ե գարնանացանն անցկացնել որինակելի կերպով, աշխատել ձեռք բերել ցանքսերի նկատմամբ ամենաուշադիր խնամք, մասնավորապես քաղհանել բոլոր հասկավորներն անպայմանորեն և



56835-66

բերքահավաքի ժամանակ թույլ չտալ, վոր կորուսա  
լինի Հասկավորների կեսից ավելին մենք կհավաքենք  
կոմբայններով, հետեաբար և կոմբայնով հավաքած  
յուրաքանչյուր հեկտարից պահպանած կլինենք մեկու-  
կես ցենտներից մինչև յերեք ցենտներ հացահատիկի:

Լիովին ընդունելի յենք համարում դնեպրոպետ-  
րովյան կազմակերպությունների նաև մնացյալ առա-  
ջարկությունները բերքատվության մասին, տղկա-  
նեփի ասպարիգում — 8 ցենտներ, շաքարի ճակնդեղի  
ասպարիգում — 210 ցենտներ, բամբակի ասպարի-  
գում — 5 ցենտներ հեկտարից, և հույս ունենք, վոր  
մենք բերքատվության այս բարձր չափից կանցնենք:

Մըցակցության յելքի լուծումը նշանավոր չափով  
կախված ե գարնանացանի համար մեր նախապատ-  
րաստությունից և կազմակերպվածությունից, Այսինչ,  
չիմա արդեն վառելանյութը լցնելու, տրակտորների ու  
գյուղատնտեսական ինվենտարի նորոգման վորակի  
կողմից, ինչպես և սովորողների, ՄՏ կայանների, կող-  
խողների ու բրիգադների արտադրական պլանների  
մշակման, կադրերի պատրաստման ու վերապատրաստ-  
ման կողմից Ազով-Սևծովյան յերկրամասն ուշանում  
և, մորովհետև մինչև փետրվարի 15-ը յերկրամասը  
պետք և լիովին պատրաստ լինի ցանքսին, պետք և  
անցկացնի իր պատրաստության գլխավոր ստուգա-  
տեսը, այսինքն՝ վորձնական յելույթներ ունենա դեպի  
դաշտ:

Այս տարի մենք պարտական ենք ցանելու անցյալ  
տարվա համեմատությամբ գոնե յերկու անգամ ավելի  
կարճ ժամկետներում, այսինքն՝ յուրաքանչյուր կող-  
խողում և սովորողում ամբողջ աշնանավարը տափա-  
նել 3 որում և ցանել 5 — 7 որում: Նկատի ունենա-

լով տափանների և շարքացանների թվի անբավարա-  
բությունը, մենք կոլխոզների ու ՄՏ կայանների մի-  
ջոցներով պատրաստում ենք մոտ 100 հազար փայտե  
տափան, վերականգնում ենք 25 հազարից ավելի թեթև  
գութան (բուկեր) աշնանավարը ցանելու համար, վոր-  
պեսի ամբողջ տրակտորային պարկը ներկցվի տափան-  
ման ու ցանքսի գործին (վորովհետև ամբողջ գար-  
նանացանի հողաշերար (կլինը) աշնանավար և արգած):

Մինչդեռ ուայոնական կազմակերպությունների ստու-  
կումը ցույց ավեց, վոր վերջին ժամանակները ուայ-  
կոմներն ու ուայգործկոմները համարյա չեն լինում սով-  
խողներում, ՄՏ կայաններում, արհեստանոցներում և  
կոլխոզներում: Դաբնանային ցանքսի աշխատանքները  
մոտենալու գիտակցությունը դեռ չի անհանգստաց-  
նում մեր զեկավարող աշխատողներին ուայոնում և  
կոլխոզում:

Մենք մի քիչ ցածր ենք համարում կոմբայնի ար-  
տադրանքի այն նորման, վոր Դնեպրոպետրովշչինան  
և առաջարկում, այսինքն՝ «Կոմունարի» համար — 300  
հեկտար և «Ստալինեցի» համար — 450 հեկտար: Ան-  
ցյալ տարվա փորձի վրա հիմնված, ուղիղ ենք համա-  
րում մեր կոմբայնների համար այդ պահանջները ելի  
50 հեկտարով ավելացնել: Ազով-Սևծովյան յերկրա-  
մասի համար անկարելի յենք համարում թեկուզ տրակ-  
տորների մեկ մասի միահերթ աշխատանքի անցումը,  
ինչպես այդ առաջարկում են զնեպրոպետրովշիները:  
Մենք չենք կարող կատարել նաև ամբողջ ցելն ապ-  
րիլ ամսում անելու առաջարկը, վորովհետև կուբա-  
նում ցելի մոտավորապես կեսը պետք և թողնել իբրև  
արտօտատեղ (հարոս), վորը կարելի յե վարել միայն  
հուլիս ամսին: Այլապես մենք տափարն արածացնելու

տեղ չենք ունենա, վորովհետև կուբանի մեր հողերը  
վարդում են ընդհուպ մինչև ստանցան: 2,5 հազար  
լիտր կաթ մի կովից մենք հույս ունենք ստանալու  
կարմրամորթ-գերմանական կովից: Դալմուխ կովից,  
ինչպես և լեռնային կովից այդքան կաթ չենք կարող  
ստանալ (զրանց թիվը յերկում 55 հազարից ավելի յե),  
և դրա համար մեր միջին կիթը պահաս կլինի: Դնեալ-  
րովետրովոկի մարդից զգալիորեն հետ ենք մնացել  
անկովությունը վերացնելու գործում (մոտավորապես  
140 հազար անկով տնտեսություն): Մեր այս հետ  
մնալը հույս ունենք վերացնել 1936 թվին: Անառնա-  
պահության վերաբերյալ մրցակցության մյուս պայ-  
մաններն ընդունելի յեն:

Մենք առաջարում ենք, փորպես Դնեալրովետրով-  
շինայի հետ մեր ունեցած մրցակցության պայման-  
ներից մեկը, մասսայական աշխատանքներ անցկացնել՝  
անտառանկման և տեղական ջրերը բռնելու բնա-  
գավառում: Արդեն անցյալ տարի մենք տնկորաննե-  
րում ցանել ենք զանազան տեսակ ծառերի սերմեր,  
մի բան, վոր 1936 թվին մեզ թույլ են տալիս ան-  
տառային մասսի լիների և անտառապաշտման շարքերի  
վերատնկումներ կատարելու՝ 100 հազարից ավելի քա-  
նակությամբ: Այս աշխատանքները հիմնականում պիտի  
անցկացվեն յերկրամասի արևելյան մասում, ուր նրանք  
անխզելիորեն շաղկապված են այն մեծ աշխատանք-  
ների հետ, վորոնք տարգում են ահազին ջրամբարներ  
տեղեկության համար, յերկրամասի ամենաչորային ու  
անջրդի մասում, կառուցելով մի շարք խոշոր ամբար-  
տակներ՝ այսպես կոչված Մանիչի հովտում:

Կարեվորագույն գործ ենք համարում յերկրի  
շանքաշրջանառության մեջ անպատճառ մտցնել առ-

վույտը (յոնջան), մանավանդ արեվելքում, ուր նա  
յերկու-յերեք անգամ ավելի բերք ե տալիս, քան  
բնական արոտատեղերը:

Դնեալրովետրովշինայի հետ մրցակցությունը  
մենք, նախ և առաջ, կապում ենք այն խնդիրների  
կատարման հետ, վորոնք առաջադրված են ընկեր  
ՍՏԱԼԻՆԻ կողմից այն մասին, վոր մոտակա 3—4 տա-  
րում հացահատիկի պրոդուկցիան (արտադրանքը)  
հասցվի 7—8 միլիարդ ֆիթի: Մեզ համար, ցորենի  
այդ հիմնական ուայոններից մեկի համար, դա նշա-  
նակում է մերձավոր 2—3 տարում հացահատիկա-  
յին կուլտուրանների բերքատվությունն ավելացնել  
առնվազն յերկու անգամ, այսինքն՝ տալ 550 միլիոն  
փութ հացահատիկային կուլտուրաններ: Ուստի Դնեալ-  
րովետրովշինային մենք առաջադրում ենք մրցակ-  
ցության վերաբերյալ նաև մի հարց այն աշխատանք-  
ների մասին, վորոնք նախապատրաստում են 1937  
թվի բերքը, այսինքն ցել անել — 1.300 հազար հեկ-  
տար, խողանակար — 2,500 հազար հեկտար, աշխատա-  
վար՝ 1937 թվի ամբողջ ցանքսի համար, պարաբռա-  
ցում — 190 հազար հեկտար տարածության վրա՝  
ամբողջապես անցնել տեսակավոր սերմացույին,  
մտցնել նոր տեսակներ, վորոնք չվախենան ժանգից  
և ուրիշ հիվանդություններից և այլն: Դեռ շատ  
ուժեղ և՝ նույնիսկ կոլխոզներում դիշատիչ տերերի  
այն համայա նախապաշարմունքը, թե կուբանի սե-  
փանողը պարաբռացման կարիք չունի: Փորձը ցույց  
ե տվել, վոր պարաբռացումը բերքն ավելացնելու  
կարեվոր միջոցներից մեկն ե, ըստ յերեսույթին վոչ  
միայն Ազով-Սևվծովյան յերկրամասում, այլև Դնեալ-  
րովետրովշիկի մարզում: Այսինչ, դեռ մինչև այժմ

առանձին առաջավոր կոլխոզներն ու բրիգադներն են միայն, վոր ինչպես հարկն և լծվել են գոմաղբը հավաքնու և զաշտերը փոխադրելու, ինչպես նաև տեղական քիմիական պարարտացումներ՝ դանելու աշխատանքին: Մեր կենսական խնդիրն ե՝ ոգնել և ամեն կերպ դարդացնել այդ աշխատանքը:

Վերջին ժամանակի ամենաուրախալի փաստերից մեկն այն ե, վոր մեր առաջավոր աշխատողների՝ կոմբայնավարների, տրակտորիստաների, կոլխոզների նախագահների, բրիգադիրների՝ բերքի այս վարպետների որինակին հետեւելով, բերքատվությունը կրկնապատճելու համար բացված ստալինյան արշավին ներկցվում են մեր ազգութեանիկական գիտական ուժերը և զանազան գիտական ինստիտուտներ ու գլոբուգական հիմնարկներ: Յեթե սովորողների, ՄՏ կայանների և կոլխոզների ունեցած ահազին արտադրական հնարավորությունները հաջողվի անհապաղ միացնել ազգութեանիկայի իսկական գիտելիքների հետ, յեթե մեր գյուղատնտեսության ինժեներատեխնիկան անձնակազմը ներկցվի և գլխավորի բերքատվությունը բարձրացնելու համար մղվող պայքարը, ապա մենք արդեն ընթացիկ տարում ձեռք կբերենք խոշոր արգյունքներ: Լավ կլիներ, յեթե հաջողվեր մեր գիտական հիմնարկների միջև մրցակցություն կտղմակերպել, ինչպես նաև մեր կոլխոզների, սովորողների ու գիտական հիմնարկների միջև ազգությունների մասին առաջարկ արդի արագ փոխանակում: Մա շատ առաջ կտաներ գործը:

Բերքի կրկնապատկման համար մղված պայքարին զուգընթաց, պայքար, վորի համար կնքված սոսմրցակցությունը ծավալվում է մեր յերկրութեան մեկ:

մենք սիտեմատիկաբար հրապարակում ենք մամուլի մեջ առաջավոր կոլխոզների, բրիգադների, սովորողների, տրակտորիստաների, կոմբայնավարների այն առաջարկները, վորոնցով պարտավորվում են ձեռք բերել այս կամ այն կուլտուրայի ասպարեզում ուղղացնելու բերքեր կամ իրենց մեքենաների վրա—ուեկորդային արտավրանք: Այս առաջավոր-ստախանովականները վոչ միայն ցույց են տալիս մրտաներին, թե ինչպիսի խոշոր արդյունքներ կարելի յե ձեռք բերել գյուղատնտեսության մեջ, վոչ միայն խորտակում են հողի բերքատվության և մեքենաների արտադրողականության մասին գոյություն ունեցող վաղեմի կարծիքները, այլև գալիս են վկայելու այն գործնական միջոցների մասին, վորոնց շնորհիվ բարձր բերքեր են ապահովում նրանք և հույս ունեն ավելի ևս մեծ արդյունքների համար: Ստախանովյան այս շարժման զլուկն են անցել գյուղատնտեսական աշխատանքի ճակատամասի մեր շքանշանակիրները:

Մեր պատվիրակության կողմից գնեպրոպետրովցիներին արված մրցակցության հրավերը խորը ցնցեց կոլխոզնիկներին: Ստացվում են բազմաթիվ հեռագրեր ու նամակներ, վորով պահանջում են մասնանշել Դնեպրոպետրովսկի այն կոլխոզը, սովորողը, ուայոնը, վորի հետ կարելի լիներ մրցակցությունն սկսել: Մեր գոնցիների և կուբանցիների ձեռքերը քոր են գալիս՝ Դնեպրոպետրովշինայի գյուղատնտեսական աշխատողների հետ չափվելու համար:

Մենք գիտենք, վոր Դնեպրոպետրովսկի մարզը լուրջ «հակառակորդ» ե, վոր նա Միության առաջավոր մարզերից մեկն ե: Բայց հենց գրա համար

Ել Դնեպրոպետրովշչինային հրավիրեցինք մրցակցության: Վորովինուն հավատացած ենք, վոր Դոնի, Կռւբանի, Սալսկի տափաստանների, Թամանի կոլխոզներն ամոթով չեն մնա:

Մենք հավատաի յենք, վոր միացյալ ուժերով, մրցակցելով ընկեր ՍՏԱԼԻՆԻ ցուցմունքները կատարելու համար, ամենակարճ ժամանակում ձեռք կը բնք մեր բերքի կրկնապատկումը և գրանով ել ունեվոր կոլխոզային կյանքի ծաղկումը:

Հաջողություն ենք ցանկանում Դնեպրոպետրովշչինային, Խորապես հավատում ենք մեր հաղթանակին:

## Մ. Մ. ԽԱՏԱՅԵՎԻԶ

ՈՒԿԿ(թ) ԴՆԵՊՐՈՊԵՏՐՈՎՇՉԻ  
ՄԱՐԶԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԳԱՎԱՒՂԱՔ

## ՍՊԾՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՆԵՐԳՐԱՎԵԼ ԼԱՅՆ ՄԱՍՍԱՆԵՐԻՆ

Միության ժողովրդանտեսական հաշվեկշռում Դնեպրոպետրովսկի անակարար կշիռը բավական մեծ է: Հացահատիկային ցանքսերի տարածությունը կազմում է միութենական տարածության 3,5 տոկոսը: Մենք հանձնել ենք միութենական հացի պլանի մոտ 7 տոկոսը: Կոլխոզային սեկտորի յերեք միլիոնից ավելի հեկտար հացից՝ մարզը 1935 թվին հանձնել ել յուրաքանչյուր հեկտարից միջին հաշվով 29 փուժի Դնեպրոպետրովշչինան բամբակի ու տղկանեփի վերաբերյալ իր պլանը գերակատարել եւ: Մենք տղկանեփի ցանել ելինք 12 հազար հեկտար, բամբակ՝ 45 հազար: Պետությանը հանձնված ե 32 հազար ցենտներ տղկանեփի, վոր պլանի 127 տոկոսն ե անում, 14 հազար տոնն բամբակ, վոր անում ե պլանի 115 տոկոսը:

1935 թվի գերջին մարզն ուներ՝ 9.500 տրակտոր, 4.800 կոմբայն, 5.500 կիսաբարդ կալսիչներ: Կոմբայնով հնձել ենք միջին հաշվով ավելի քիչ, քան

Ազով-Սևծովյան յերկրամասը: Հաշվի առնելով նաև յեղիպտացորենը, ամեն մի կոմբայնով մենք հնձել ենք 230 հեկտար: Կոմբայնի աշխատանքի համար կարճ ժամանակ եր տրված (կոմբայններն աշխատում եյին 20—25 որ): 30 որվանից ավելի աշխատող կոմբայն չկար: Այսպիսով կոմբայնի միջին որական արտադրանքը բարձր եր:

Անցալ տարի ամեն մի տրակառը արտադրել ե 554 հեկտար: Յեթե հաշվի առնենք, վոր 9.500 տրակառը-ներից վնչ բոլորն եյին աշխատում, ապա ամեն մի տրակտորի արտադրանքը կբարձրանա 600—615 հեկտարի:

Վերջին տարիները մենք ձգտում եյինք առավելագույն չափով կրճատել դիմակոր աշխատանքների անցկացման ժամկետները: 1933 թվին գարնանացանն անցկացրինք 75 որում: 1934 թվին—70 որում: 1935 թվին—45 որում: Յել և արված մեկուկես միլիոն հեկտարից ավելի, վոր գարնանացանի ամբողջ պլանի մոտավորապես 73 տոկոսն ե կազմում:

1935 թիվը յեղանակի պայմանների տեսակետից բարեհաջող տարի չեր: 1935 թիվը մենք թիւակոխեցինք խոնավության ավելի քիչ պաշարով, քան 1934 թվին: Հացահատիկայինների միջին բերքը կազմեց մոտավորապես 48 փութ, ընդ վորում Ազովի ծովին մոտ գտնված 15—18 ռայոններում, մարզի հարավարևմտյան սահմաններում բերքը շատ ցածր յեղափ, մնացյալ լուայոններում բերքն ավելի քան բարձր եր: Անցյալ տարի աշխարի արժեքը, ըստ կիսատ տվյալների, 2,8 կիլոգրամ եր կազմում: Կոլխոզների մեծագույն մասի աշխարի արժեքը միջինից բարձր ե: Դրամի հաշվով աշխարի միջին արժեքն, ըստ կիսատ տվյալների,

հավասար եր 1 ոռորլի 21 կոտեկի, 1934 թվի 54 կոտեկի և 1933 թվի 1 ոռորլի 10 կոտեկի գիմաց: Կոլխոզային ամեն մի տան ընդհանուր յեկամուտը միջին թվով 1.412 ոռորլի յեր, 1933 թվի 1.012 ոռորլու և 1934 թվի 759 ոռորլու գիմաց: Ամեն մի կոլխոզային տան աշխարերի քանակը հասնում եր 1934 թվին—368-ի, 1935 թվին—385-ի: Մեկ աշխատումակ անձի միջին արտադրանքն եր՝ 1934 թվին—190 աշխոր, 1935 թվին—211 աշխոր: Կոլխոզնիկների բարեկեցության աճն ընթանում եր աշխարի արժեքի բարձրացման գծով, ինչպես և յուրաքանչյուր կոլխոզում արտադրված աշխարի թվի բարձրացման գծով:

Վոչ պակաս տեղաշարժ ե յեղել անասնապահության բարեկավման գործում: Անասնապահության զարգացման պլանը կատարված ե՝ ըստ խոշոր յեղեկարգոր անասունների՝ 113 տոկոսով, ըստ խողերի՝ 115 տոկոսով, ըստ վոչխարների՝ 118 տոկոսով: Յեկմիայն ծիրու մասղաշի բուծման պլանն ե, վոր կատարվել ե 93 տոկոսով: 1935 թիվը անասնապահության զարգացման համար անբարեհաջող տարի յեր: Այդ տարին մենք թեվակոխեցինք առանց կերերի: Այս պայմաններում մեզ այնուամենայնիվ հաջողվեց վոչ միայն պահպանել անասուններին, այլև դարկ տալ նրանց հետագա ավելացմանը:

Մենք ձեռք ենք բերել աճում և առաջխաղացուժ ըստ արտադրանքի բոլոր տեսակների: Բայց և այնպես արդյունքները մեզ չեն գոհացնում: Առաջավոր կոլխոզների, լավագույն առաջընթացիկների բերքի համար տարած պայըքարը ցույց ե տալիս, վոր չնայած 1935 թվի վոչ լիովին բարեհաջող պայմաններին՝ կարելի յեր տալ նշանավոր չա-

գով ավելի հաց և անամնապահության արտադրանք։ Մենք տասնյակ և հարյուրավոր փաստեր ունենք, վոր կողը-կողքի ու մինչնույն պայմաններում գտնվող կոլխոզներից մեկն ստանում ե յիշկու անգամ ավելի բերք, քան մե հարեվան կոլխոզները։ Մարզում մենք ունենք 130 կթողներ, վորոնք ամեն մի կովից ստացել են յերեք հազար լիտր և գրանից ել ավելի կաթ։ Այսինչ միջին հաշվով մեր մարզում ամեն մի կովից ստացվել է 1.900 լիտր կաթ։ Մենք տասնյակ խոզապահներ ունենք, վորոնք կարողացել են ստանալ յուրաքանչյուր մայր խոզից տարեկան 20-ից ավելի առողջ խոճկորներ, մինչեւ մարզում առողջ խոճկորների միջին թիվը 8-ն ե։ Մենք շատ տրակտորային բրիգադիներ ու արակտորիստներ ունենք, վորոնց յուրաքանչյուր մեքենան արտադրել է 1.200 հեկտար և ավելի։

Ի՞նչ խոդիրներ ե դնում մարզը 1936 թվին հացատիկի վերաբերմամբ։ Առանալ 100 միլիոն տվյալի, քան անցյալ տարի, այսինքն՝ հերթա 155 միլիոն փութ հացահատիկի գիմաց ստանալ առնվազն 250 միլիոն այն հաշվով, վոր 3—4 տարվա ընթացքում հացահատիկայինների ընդհանուր բերքը կրկնապատկվի։ Առկիցնի Կնեպրոպետրովշչինայի մուծանքը ընկեր Առաջին կողմից առաջադրված խոդրի իրացման գործում, այն ե՝ ամենամոտիկ ապագայում տարեկան տալ 7—8 միլիոն գութ հացահատիկ։

250 միլիոն փութ հացահատիկ ստանալու համար անհրաժեշտ ե, վոր ցանքած յուրաքանչյուր հեկտարը 80 փութ բերք տա։ Դաշտային 12 հազար բրիգադներից ավելի քան 3 հազարը պարտավորություն են վերցրել մի հեկտարից անպատճառ 120 փութ հավաքել։ Կոմբայնների համար հավաքելու ժամկետ սահմա-

նում ենք 30 որից վոչավելի։ Գլխավոր շեշտը գնում ենք որական առավելագույն արտադրանքի վրա։ Յուրաքանչյուր տրակտորի արտադրանքը կհասցնենք 720 հեկտարի այն պայմանով, վոր տրակտորային պարկի առնվազն մեկ յերրորդն անցնի միահերթ աշխատանքի։ Միահերթ աշխատանքը կազմակերպման և տրակտորի ոգտագործման ամենանպատակահարմար ձևն ենք համարում։ Մենք արգեն ունենք մի քանի տրակտորային բրիգադների զբական փորձը։ Դա եժանացնում ե աշխատանքը, պակասեցնում և տրակտորի մաշվելը։ Դիշներվա աշխատանքի հետևանքով վոչ միայն ավելի յե մաշվում տրակտորը, ավելի յե ծախսվում փառելանութը, այլ և վատանում ե աշխատանքի վորակը։ Հաճախ ցերեկվա թանկապին ժամերը վատնվում են տրակտորը թեթև նորոգելու և կարգի բերելու համար։ Միահերթ աշխատանքի ժամանակ մենք կարող ենք ստիպել վոր տրակտորն աշխատանքի ամրող 10 ժամն ել ակուներում լինի, իսկ սարքավորումն ու նորոգումը կատարել հերթափոխությունից առաջ։

Խոսելով բերքի համար մզգակ պայքարի մասին, չենք կարող լուել յարովիզացիայի մասին։ Մենք յարովիզացիան կանցկացնենք 820 հազար հեկտար տարածության վրա, վոր ամրող վաղացան հասկավորների 60 տոկոսն ե կազմում։

Վորովինետի գարնանացանը շատ ե տուժում մշտական հարավ-արևելյան քամբներից, հացահատիկային ցանքների շուրջը չորս կարգ սորգում յենք ցանում։ Զորելու գեպքում սորգոն ծլում ե մայիսի վերջերին, յերբ սովորաբար սկսվում ե սննդարեհաջող յեղանակը։ Դա մեծ եֆեկտ կտա, Սորզոն, վոր ինքնին արդյունաբեր կուլառուրա յե, կպաշտպանի հացահատիկային-

ներին և վորոշ չափով կապահովի բերքի ավելացումը:

1935 թվին մենք լայնորեն կիրառում ենք աշխատացանների տափանումը: Ընթացիկ տարում մենք նշանագծում ենք համատարած տափանում անցկացնել և ամբողջ ցանքսը կատարել տեսակավոր սերմացույով:


Անասնապահության բնագավառում խնդիր ենք դնում տալ միջին հաշվով 2,500 լիտր կաթ: Մարզում կան արդեն մի քանի հարյուր կոլխոզներ, վորոնք պարտավորվել են ստանալ 3,500 լիտր կաթ: Առաջնաթացիկների փորձը ցույց է տալիս, վոր դա միանգամայն իրագործելի յէ: Մեկ մայր խոզից նշանագծում ենք միջին հաշվով ստանալ առնվազն 10 առողջ խոճկորների աճ, կան շատ կոլխոզներ, վորոնք հանձն են առել ապահովել 20 առողջ խոճկորների աճը: Մարզի կոլխոզներն ունեն 350 հազար գլուխ վոչխար, սովորությունը — 90 հազար գլուխ: Այդքանը քիչ է: Կան բոլոր հնարավորությունները մինչև 1937 թվի վերջը ունենալ մեկ միլիոն գլուխ վոչխար: 1936 թվի համար խնդիր ենք առաջնություն՝ յուրաքանչյուր 100 հատ մայր վոչխարից (մաքից) միջին թվով ստանալ 130 հատ գառ, բրդի խուզը հասցնել 4 կիլոդրամի (անցյալ տարի — 2,6 կիլոդրամ): Լայն պայքար ենք կազմակերպում, վոր տարին յերկու ծին ունենան վոչխարները: Հարցը քննել են չորանները: Մեր գիտահետական ինստիտուտը (Ասկանիա նովան) իր վրա յէ վերցրել այս գործի լուծումը:

1936 թ. պատրաստվում ենք կոլխոզային բոլոր ֆեռաներում անցկացնել կովերի, խոզերի, վոչխարների համատարած մետրացումը (ցեղի ազնվացումը, Վ. Թ.):

Այդ բանն անելու պայմանները բարեհաջող են: Սեծ ողնություն ենք ստանալու Ասկանիա Նովայից, վորը շատ մեծ աշխատանք ե տանում հիբրիդացիայի (խառնածնային) բնագավառում: Ասկանիա նովայի աշխատանքն անամապահության բնագավառում կարելի յէ համեմատել ակադեմիկ Լիսենկոյի դաշտավարության: Բնագավառում կատարած աշխատանքների հետ:

Այս բոլորի հիման վրա աշխատում ենք կոլխոզային յուրաքանչյուր տան ընդհանուր (վալովայ) միջին յեկամուտը հասցնել 2,500 ռուբլու, 1935 թվի 1,300 ռուբլու դիմաց:

Ավելի ուշագրություն ենք նվիրում կարենի նախապատրաստանության: Աշխատում են 4 հազար զոտեխիսմբակներ, ընդգրկված են 77 հազար կոլխոզների: Լարված ուժերով պատրաստվում ենք հասարակական ագրոզոտեխնիքնությունն անցկացնելու: Յերկու տեսակ քննությունն ելինելու — մասսայական (հասարակական-տեխնիկական) և վարչության անդամների ուժը գաղտավորության ու անանապահության վարպետի կոչում ստանալու: Այս կոչումը կատանա միայն նա, ով 1935 թվին ցուցաբերել է աշխատանքի լավ արդյունքներ և ռայոնական կենտրոնում քննություն կտա «գերազանց» գնահատականությունը: Մենք նշանագծել ենք յերեք տարվա մեջ այս պրակտիկումներից բաց թողնել ամբողջ կոլխոզային ակտիվը, դաշտավարական ու անամսապահական բրիգադների բրիգադիներին, վորպեսզի բոլոր բրիգադների և ֆեռմաների գլուխ կանգնած լինի ազգությունների կամ զոտեխնիկը: Այս տարի 6,300 բրիգադիր ենք ուղարկելու աթումություն կուրսերը:



Ահա սրանք են այն գլխավորները, վոր մենք նշել  
ենք 1936 թվին, Գյուղատնտեսության մեջ ստախա-  
նովյան շարժումը ծափալվել ե նույնքան լայնորեն,  
ինչպես և արդյունաբերության մեջ ու տրանսպոր-  
տում։ Այժմ կոլխոզային մասսաների վերելքն այնքան  
մեծ է, վորքան թերեւ յերբեք չի յեղել։ Ստախանով-  
յան շարժումը, հանդիսանալով սոցմրցակցության բարձ  
րագույն ետապը, շատ նորություններ ե հանդես բե-  
րում։ Նախկին տարիների սոցիալիստական մրցակցու-  
թյանը մասնակցում եյին այն կոմբայնավարները,  
տրակտորիստները, բրիգադիրները, վորոնք գեռնոր եյին  
յուրացնում տեխնիկան և՝ իսկապես ասած՝ իրենք  
գեռ նոր եյին սովորում։ Այժմ հանդես ե յեկել նոր  
մարդկանց մրցակցությունը, բարձր վորակավորում  
ունեցող վարպետների մրցակցությունը։

Կառավարության վերջին վորոշման համաձայն  
Դնեպրոպետրովսկի մարզում պարզեատրված են գյու-  
ղատնտեսության 71 առաջընթացիկներ, Աղով. Սևծովյան  
յերկրամասում — 81 առաջընթացիկներ։ Դրանից  
առաջ Դնեպրոպետրովշինայում պարզեատրված եյին  
16 կոմբայնավար։ Աղով. Սևծովյան յերկրամասում —  
21 կոմբայնավար։ Արդեն այս բարձր գնահատականը,  
վոր տվել են կուսակցությունն ու կառավարությունը,  
բնորոշում են մրցակցողներին։ Մեր մրցակցությունը  
պետք ե լինի լարված, կրիվը պետք ե լինի լուրջ։

Մենք լսել ենք Աղով. Սևծովյան հերոսների մասին։  
Գիտենք քանչանակիր կոմբայնավարուհի՝ կազակուհի  
Կոֆանովյային, տրակտորիստուհի՝ կոմյերիտուհի՝ Կո-  
վարդակի Պաշային, տրակտորային բրիգադի շքանշանա-  
կիր — բրիգադիր Վալուշինին, շքանշանակիր — բրիգա-  
դիր Բիչկալովին և ուրիշ շատերին։ Մեր մարզը հան-

դես ե բերում արժանավոր հակառակորդներ՝ քա-  
նշանակիր — տրակտորիստ Կալիս Իվանին, շքանշա-  
նակիր — տրակտորիստ Տիխովյոյին, կոմբայնավար  
Կովեսկովին, կոմբայնավարուհի Վինենիկ Դունյային,  
կոլխոզի շքանշանակիր նախագահ՝ Խիծնյակ Կունենին,  
ազգոնում Բրինգային և ուրիշ շատերին։

Անցյալներում մենք ձևակերպված մրցակցություն-  
չենք ունեցել ուրիշ մարզերի հետո Մյուս յերկրա-  
մասերի ու մարզերի կողքին մեր մարզն ել կոիվ եր  
մզում առաջնություն ձեռք բերելու համար առանց  
վորես ձևականության Աղով. Սևծովյան յերկրամասի  
հետ կնքված մրցակցությունը կօնկը ետ սրություն է  
տալիս, կազմակերպչական պարզուղություն և մացր-  
նում առաջնության համար մղվաղ պայքարում։

Մենք մասսայական արձագանք ենք գտնում կոլ-  
խոզներում։ Առաջնության համար պայմանագրեր են  
կնքվում։ Սա վոչ թե միայն մարզի ու յերկրամասի  
մրցակցություն ե լինելու, այլ և Աղով. Սևծովյան  
յերկրամասի ու Դնեպրոպետրովշինայի հարյուրավոր  
առաջավոր կոլխոզների, հազարավոր բրիգադների,  
առաջավոր կոմբայնավարների, տրակտորիստների  
սոցիալիստական գյուղատնտեսության վարպետների  
մրցակցություն։ Մենք ամեն միջոցներ ձեռք կա-  
նենք, վորպեսզի այս մրցակցությունը միլիոնավոր  
մասսաների ակտիվ, մարտական մրցակցություն լինի։

Հարկավոր ե կարգավորել փորձի փոխադարձ ոգ-  
տագործումը, լայնորեն լուսաբանել այն՝ «Մոլոտ» և  
«Զորյա» լրազրերում։ Մրցակցության մեջ հարկա-  
վոր ե ներգրավել գիտական ուժերը։ Մեզանում, Դնեպ-  
րոպետրովշինայում մեծ աշխատանք ե ծավալված՝  
գյուղատնտեսության մեջ ուլուրակար ալիքների

կիրառման ուղղությամբ, վորոնք շատ եփեկտ են առաջ: 1935 թվին մենք ճառագայթների յենթարկված սերմացույով ցանել ենք 100 հեկտար, իսկ 1936 թվին ցանելու յենք 5 հազար հեկտար: Մենք հացահատիկացին տնտեսության Գիտահետազոտական ինստիտուտում հետաքրքրական փորձեր ենք կատարում: Հարկավոր ե ավելի լայնորեն ներդրավել մեր մրցակցության մեջ գիտական կազմակերպություններին:

Մենք գիտենք Ազով-Սևծովյան յերկրամասի խորագույն հաջողությունները, վորոնք անագին նշանակություն ունեն վազ միայն Ազով-Սևծովյան յերկրամասի, այլի ամբողջ յերկրի համար: Մենք վողջունում ենք այդ հաջողությունները: Մենք ցանկանում ենք, վոր Ազով-Սևծովյան յերկրամասի աշխատավոր կազակությունը 1936 թվին ձեռք բերի ավելի շատ հաջողություններ, կատարի իր հանձն առած բոլոր պարտավորությունները: Աակայն զգուշացնում ենք՝ կոիվը լինելու յե լուրջ, մենք կավելու յենք ուժեղ կերպով, վորպեսզի ձեր հաջողություններից անցնենք:

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՑԵՐԿՐԱՄԱՍԻ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՅԵՎ  
ՍՈՎԿԽՈԶՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ  
ԴՆԵՊՐՈՊԵՏՐՈՎԿԱԿԻ ՄԱՐԶԻ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՅԵՎ  
ՍՈՎԿԽՈԶՆԵՐԻ ՀԵՏ

Կատարելով ժողովրդի առաջնորդ ընկ. Առալինից ցուցմունքը — «3 — 4 տարվա ընթացքում հացահատիկի հավաքումը յերկրում հասցնել 7 — 8 միլիարդ ֆթի», Ազով-Սևծովովյան յերկրամասի յեվ Գնիեպօպերավորման վարչի կոլխոզներն ու տովիսովները սոցիալիստական մրցակցության մեջ են մտնում բերքատվությունը և անսամնապահության մթերատվությունը բարձրացնելու համար և 1936 թվին իրենց վրա վերցնում են հետեւյալ պարտավորությունները.

1. Որինակելի կերպով անցկացնել գյուղատնտեսական աշխատանքները, վորպեսզի 1936 թվին մի հեկտարից միջին հաշվով ստացվի հետեւյալ քանակությամբ բերք (ցենտներով):

Ազով-Սևծովյան Գնիեպօպերավորման  
յերկրամաս  
մարզ

Բոլոր տեսակի հացահատիկ	12,0	ցենտ.	12,0	ցենտ.
Արեածաղիկ	8,9	»	8,0	»

	Ազով Սեփառվյան յերկրամաս	Դնելութեան մարդ
Տգկանեփ	8,0 ցենտ.	8,0 ցենտ.
Շաքարաճակնդեղ	210,0 »	210,0 »
Բամբակ	5,0 »	5,0 »
Մխախոտ	10,9 »	»

Դնելութեառվակի մարզում և Ազով-Սեփառվյան յերկրամասում դաշտային բրիգադների 20 տոկոսում մի հեկտարից միջին հաշվով հավաքել առնվազն 120 գրոթ աշնանացրեն և 100 գրոթ հացահատիկ:

2. Վերոհիշյալ բերքին համար Ազով-Սեփառվյան յերկրամասի և Դնելութեառվակի մարզի Կոլխոզներն ու սովորությունները պարտավորվում են, բացի աղբոտեխնիկայի հայտնի և յուրացված ձեկերից, անցկացնել հետեւյալ միջոցառությունները:

	Ազով-Սեփառվյան յերկրամաս	Դնելութեան մարդ
ա) 1936 թվի ձմուանը կազմակերպել ձյունապահում առնվազն	500.000 հեկ.	300.000 հեկ.
բ) Տեղական պարարտանյութ թերով (գոմաղբ, մոխիր, թուչնի աղը և այլն) պարարտացնել . . .	190.000 »	130.000 »
շ) Հասկավորների յարովի զացրած սերմերով ցանել առնվազն	500.000 »	գարն անացան հասկավորների տարածության 50 — 60%
Բամբակ	2.000 »	6.000 հեկ.

	Ազով-Սեփառվյան յերկրամաս	Դնելութեան մարդ
ԴարտոՓիլ	4.000 հեկտ.	2.000 հեկտ.
շ) Տեսակավոր սերմացուներով ցանել առնվազն գարնանացան հասկավորների վերաբերյալ . . .	65%	30%
1936 թվին աշնանացան ցորենի վերաբերյալ . . .	100%	100%
ե) Ցել վարել . . . . . 1.300.000 հեկտ. 720.000 հեկտ. Վորից վաղ ցիւ (մինչև մայիսի 15-ը) . . . . .	66%	100%
զ) ԿարտոՓիլի հուլիսյան տնկումն անցկացնել . . .	2.000 հեկտ.	10.000 հեկտ.
ը) Անցկացնել յեղիպատացորենի մեքենացված ըստ յերկարության և լայնության հողամշակում տրակտորով՝ առնվազն . . .	246.000 »	50.000 »
թ) Արևածաղկի մշակում բուրկերով առնվազն . . .	20.000 »	10.000 »
ժ) Զուգաշար ցանքս, հասկայինների բուրկը լցնելով 10.000 »	—	—
ի) Խողանավար . . . . . 2.500.000 »	600.000 »	»
լ) 1937 թվի վողջ ցանքսի համար աշնանավար անել . . .	—	—
լլ) 1936 թվին ամեն մի կոմբայնով միջին հաշվով առնվազն հավաքել (հեկտարից)	350 »	350 »
«Կոմունալով» . . . . .	—	—

	Ազով-Սևծովյան յերկրամաս	Դնելուալեա. մարդ
«Ստալինեց» կոմբայնով	500 հեկ.	500 հեկ.
Բառ գորում առնվազն 200		
կոմբայններից յուրաքան-		
չյուրը պետք է հավաքի		
ավելիքքան . . . . .	700	—
3) Յեղիպտացորենը պիկեր-		
ներով հավաքել . . . . .	200,000	40,000
4) Տրակառի միջին արտա-		
դրանքը հասցնել մինչև	720	720
Հստվորում տալ առնվազն		
100 բրիդադի փորոնց ա-		
մեն մի տրակտորը պետք է		
արտադրի . . . . .	1,200	1,200
5) անցկացնել մի հերթի աշ-		
խատանք . . . . .		տրակտորային պարկի 30—35%

Ազով-Սևծովյան յերկրամասում յեղած վողջ աշ-  
խառնավարը՝ 4,100 հազար հեկտար տարածությամբ,  
Դնելուալեատրովակում — 1,700 հազար հեկտարը տա-  
փանել 3 որում:

### ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՍՈՒՄ

Գարնանացան հասկավոր մշակույթների ցանքան  
ավարտել կուբանի ռայոնների կոլխոզներում 3 — 5  
բանվորական որում, Դոնի ռայոններում — 7 բանվո-  
րական որում:

### ԴՆԵՊՐՈՊԵՏՐՈՎՎԿԱՒ ՄԱՐԶՈՒՄ

Վաղացան հասկավորների ցանքը, բայց լավ, առա-  
ջական, ավելի կազմակերպված կոլխոզներում անց-  
կացնել չորս աշխատանքային որում, իսկ մնացածնե-  
րում — վեց որից վոչ ավելի:

Անցկացնել շարատունկ մշակույթների համար ար-  
ված աշխատավարի նախացանքային մշակում, արեա-  
ծաղկի վերաբերյալ նախացանքային մշակման յին-  
թարկել վողջ ցանքսատարածության կեզը, յեղիպտա-  
ցորենի վերաբերյալ՝ առաջին անգամ վողջ ցանքսա-  
տարածությունը և յերկորդ անգամ — ցանքսատա-  
րածության 60 տոկոսը, տղկանեփի և շաքարածակն-  
դեղի վերաբերյալ՝ առնվազն մեկ անգամ և բամբակի վերաբերյալ՝ 2 անգամ ամենողջ ցանքսատարածությունը:

Ամեն մի կոլխոզում հատկացնել սերմանին հո-  
գամասեր՝ զտատեսակ սերմեր աճեցնելու համար և  
որինակելի կերպով խնամել այդ ցանքսերը:

Հասկավոր մշակույթների քաղհանը կատարել վողջ  
ցանքսատարածության վրա: Կուբանի ռայոններում  
առնվազն 3 անգամ քաղհանել յեղիպտացորենն ու  
արեածաղկիկը, իսկ Դոնում առնվազն 2 անգամ, արդ-  
կանեփը քաղհանել վոչ պակաս, քան 4 անգամ, ճա-  
կնդեղը՝ վոչ պակաս, քան 6 անգամ, բամբակին առ-  
նվազն 6 անգամ, ծխախոտն առնվազն 4 անգամ:

Հացահանձնման և կատարված աշխատանքների ու  
հավաքված մշակույթների համար մթերավարձի պե-  
տական պլանն ավարտել Ազով-Սևծովյան յերկրամա-  
սում և Դնելուալեատրովակի մարզում մինչև ողոս-  
տոսի 20:

Յ. 1936 թվին Ազով-Սևծովյան յերկրամասում  
լիովին վերացնել կովաղբերությունը և կոլխոզների ու

սովորողների անասնապահական տնտեսություններում  
ձեռք բերել հետեւյալ ցուցանիշները.

Ազով-Սևծովյան Դնեպրովետ-  
յերկամաս մարդ

ա) Ամեն մի կթան կովի տառ ըեկան միջին կիթը հասց- նել կարմիր գումանա- կան կովերի կթին . . .	2.500 լիտրի	2.500 լիտրի
Կալմիկյան և լոռնային անասնապահության ուս- յուններում հասարակ և գորշ ուկրայինական տե- սակի հետ . . . . .	800	1.600
բ) 1936 թվին աճեցնել հորթ՝ կովերի ընդհանուր քանակի համեմատ . . .	87%	87%
Քուռակ՝ մատակների լող- հանուր քանակի համեմա- տությամբ . . . . .	70%	70%
Գառ՝ մաքիների ընդհա- նուր քանակի համեմա- տությամբ . . . . .	115%	130%
Ամեն մի խոզամայրից ստանալ խոճկոր . . .	10 հատ	10 հատ
շ) Մի գոչխարից միջին հաշ- վով խուզել . . . . .	4,8 կգ	4,8 կգ
մերինոսյան վոչխարից մետիսյան վոչխարից . .	4,0	4,0
կոշտաբուրդ վոչխարից .	2,3	2,3
Դնկուբատորում աճեցնել ճուտ վոչ պակաս . . .	70%	70%

Ազով-Սևծովյան յերկամաս	Դնեպրովետ- յերկամաս	Դնեպրովետ- յերկամաս
ի) Այեն մի ածան հավի ձվատվությունը միջին հաշվով հասցնել . . . .	70 ձկի	90 ձկի
շ) Անցկացնել բոլոր կովե- րի, խոզերի և մաքինե- րի աղնվացում բոլոր կու- խոզային ֆերմաներում	—	—
ը) Անցկացնել մաքիների արհեստական բեղմնավո- րում . . . . .	450.000 գլուխ	—

4. 1936 թվին կատարել անտառապահման գոտի-  
ների տնկում հետեւյալ տարածության վրա՝

Ազով-Սևծովյան յերկամասում . . .	10.000	հեկտ.
Դնեպրովետրովսկի մարզում . . . .	9.000	»
Կառուցել նոր լճակներ՝	—	—
Ազով-Սևծովյան յերկամասում . . .	900 հազ.	»
Դնեպրովետրովսկի մարզում . . . .	770	»

5. Գաշտանշակության և անասնապահության յեկա-  
մուտները բարձրացնելու համար մղվող պայքարին  
զուգընթաց, լայնորեն զարգացնել կոլխոզներում տըն-  
տեսության մնացած ճյուղերն այն հաշվով, վոր 1936  
թվին ամեն մի կոլխոզային տնտեսություն առնվազն  
ստանա յեկամուտ՝

Ազով-Սևծովյան յերկամասում	2,500 ռուբ.
Ամեն մի կոլխոզնիկի վասա- տակած աշխորերի թիվը	—
հասցնել . . . . .	300

Քնեպրոպետրովսկի մարզում 2.500 ռուբ.  
Ամն մի կոլխոզնիկի վաս-  
տակած աշխարհերի թիվը  
հասցնել . . . . . 300

6. 1936 թվին ծագալել մեխանիզատորական և  
մասսայական կաղըների լարն նախապատրաստումը կոլ-  
խոզներում:

#### ԱԶՈՎ. ՍԵՎ. ՇՈՎ. ՅՈՒ. ՅԵՐԿՐԱՄԱՆՈՒՄ

ա) պատրաստել 14 հազար տրակտորիստ, 4,5 հազար  
կոմբայնավար, 4 հազար կոմբայնավարի ոգնականներ.

բ) յերկշաբաթիա կուրսերում սովորեցնել և յուրա-  
քանչյուր տրակտորային ազգեղատին ամրացնել մշտա-  
կան կցորդներ 40 հազար մարդ.

գ) նախապատրաստել 1500 կոլխոզային նախա-  
պահներ յերկրային կուրսերում և բոլոր կոլխոզային  
նախապահներին ուայոնական կուրսերում.

դ) գաշտային բրիգադների բոլոր բրիգադիներին  
ընդունել ձմեռային դասընթացքներում՝ ուայոնական  
կոլխոզային դպրոցներում և ՄՏ կայաններին կից  
կազմակերպված յերկշաբաթյա կուրսերում.

ե) բոլոր ողակավարների հետ անցկացնել 5 որյա  
կուրսեր — խորհրդակցություններ.

զ) պատրաստել յարովիզատորներ՝ 200 գյուղա-  
տնտես և 10 հազար կոլխոզնիկ.

ը) ազգութեանիկայի և զոտեանիկայի կոլխոզային  
խմբակներում ընդգրկել 130 հազար լավագույն կոլ-  
խոզնիկներ և ողակավարներ.

թ) կազմակերպել կոլխոզային կանոնադրության  
և ազգութեանիների 5-որյա ուսումնամիջությունը,  
ընդգրկելով 500 հազար կոլխոզնիկ.

ժ) ՄՏ կայաններին և սովորողներին կից ստեղծել  
տարեկան կուրսեր — առանց արտադրութունից կորե-  
լու — 4000 կին՝ տրակտորիստներ և կոմբայնավարներ  
պատրաստելու համար.

ի) 1500-ի հասցնել այն խրճիթ-լաբորատորների  
թիվը, վորոնք աշխատում են ու կորդային բերքեր և  
անասնապահության ու կորդային մթերատվություն  
նվաճելու ուղղությամբ:

#### ԴՆԵՊՐՈՊԵՏՐՈՎՍԿԻ ՄԱՐԶՈՒՄ

Դաշտավարական և անասնապահական բրիգադներ-  
ների ազգուղուստեանիկական պատրաստումն անցկաց-  
նել այն հաշվով, վոր մոտակա Յ տարում կոլխոզա-  
յին բրիգադների բոլոր բրիգադիներն ստանան ագ-  
րոզուստեանիկի կոչում:

1936 թվին մասսայական ազգուղուստեանիկական  
ուսուցմամբ ընդգրկել կոլխոզային ակտիվից 75 հա-  
զար մարդ:

Հասարակական տեխնիկական քննության յենթաը-  
կել լիովին կոլխոզային ղեկավար ակտիվին, կոլխո-  
զային արտադրության լավագույն ստախանովական  
կոլխոզնիկներին, տալով դաշտավարության, անաս-  
նապահության, այգեգործության և այլնի վարպետ-  
ների կոչում:

7. Ռայոնների միջև ծագալել լայն սոցմրցում՝  
կոլխոզնիկների կուլտուրական կենցաղի և ընակա-  
վայրերը կուլտուրական գրության հասցնելու համար:

Կազմակերպել կոլխոզնիկների և սովորողների բան-  
վորների համար.

Ծննդատներ . . . . .	500
Որինակելի ակումբներ . . . . .	200

ինչպես և յուրաքանչյուր կոլխոզում մանկամսութներ և մանկահրապարակներ:

Դաշտային աշխատանքների ժամանակ բրիգադային կայաններում կազմակերպել կոլխոզնիկների կուլտուրական սպասարկում:

Ապահովել տնակներով (բուդկաներով) յուրաքանչյուր տրակտորային բրիգադը:

Կազմակերպել հասարակական լավ մնունդ այն հաշվով, վոր աշխատանքի ժամանակ կոլխոզնիկները վոչ պակաս, քան որական 3 անգամ ստանան տաք մնունդ:

## 8. ԱԶՈՎ-ՍԵՎԵՐՈՎԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՍՈՒՄ

ա) ստանիցաներում կազմակերպել 300 որինակելի ակումբներ և բոլոր կոլխոզներում ընթերցարաններ կամ կարմիր անկյուններ:

բ) ամեն մի կոլխոզում կազմակերպել մանկամսութներ, մանկահրապարակներ և խոշոր ստանիցաներում միջկոլխոզային ծննդատներ:

գ) բրիգադային դաշտակայաններում գյուղատքներուական աշխատանքների ժամանակ կազմակերպել կոլխոզնիկների կուլտուրական սպասարկում (թերթերի ընթերցում, յերաժշտական խմբակներ, յերգեցիկ խմբեր, կինոցուցադրումներ և այլն).

դ) ամեն մի տրակտորային բրիգադի համար շինել շրջիկ վագոն — բուդկա:

ե) կազմակերպել բժշկի սիստեմատիկ այցելությունը դաշտում կոլխոզային բրիգադներին.

զ) բրիգադներում կազմակերպել բաղանիք և ջրցեր (գուշակական և առաջարկական աշխատանքի համար շինել շրջիկ վագոն — բուդկա):

ը) բրիգադներում կազմակերպել լավ հաստիական սնունդ այն հաշվով, վորապեսզի ամեն մի բրիգադում կոլխոզնիկն ստանա տաք կերակուր՝ որական առնվազն 3 անգամ:

9. Կազմակերպել մրցման ընթացքի փոխադարձ առուղում գարնանացանից առաջ, բերքահավաքից առաջ և աշնանացանից հետո՝ իրար սառուցելու համար ուղարկելով մրցակցող կոլխոզների, սովորողների, ՄՏ կայանների և ռայոնների պատգամավորություններ:

ՀԿԿ(Բ) ԱԶՈՎ-ՍԵՎԵՐՈՎԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

Բ. ՇԵԲՈԼԴԱՅԵՎ,

ԱԶՈՎ-ՍԵՎԵՐՈՎԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՏԻ ՆԱԽԱԴԱՏԻ Վ. ԼԱԲԻՆ


## ԱԶՈՎ-ՍԵՎԵՐՈՎԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ

ԿԱՐՄԱՆՈՒԿԻ	ԿԱՎԱՐԴԱԿ	ՇԱԲՐՈՎԱՆ
ՇՈՒԲԻՆ	ՄԱՎՅԱ	ՋԻԿԻՆՈՎԱ
ՄԱՅԼՅԱՐՈՎ	ԲՐԱՄԻՆ	ՆԱԶԱՐԵՏՅԱՆ
ՉԻՄԻՆ	ԶՈԼՈՅՈՒԽԻՆԱ	ԱՎՐՈՅԱՆ
ՄՈՐԻԴԻՆ	ԲՈԳԻԱՎՈՎ	ԲԱԲԵՆ
ԿՈՒ	ՇԱԽՈՒԽԻՆ	ԴՈՒԲԵԿՈ
ԳԱԼՈՒԽԻՆ	ՏՈՒԱՐՈՎԱԿԻ	ՈՒՐՈՎԱՆԻԱՎ
ԿՈՎԱՆՈՎՈՎ	ՄԱՍՈՒՐՏ	ՆԵՐԵԿԵ
ԽՈՏՈՎԵԿՈ	ՀԵԵՐԱԿ	ԳՈՐԵԿԻՆ
ԿԻՒՒՉԵԿՈ ՈՒ.	ԲՈՆԴԱՐԵՎԱ	ԿՈՏՈՎ
ՆԵՖԵԴՈՎԱ	ՏՐՈՒՖԵԽԵՆՅԱ	ԳՐՈՒԿՈ Տ.
ԲԵԼԻ	ԲԻՇԿԱԼՈՎ	ԿՈՏՐԵԿՈ Ն.
ՄՈՐԱԲԱՇԱՆ	ՄԱԿԱՐԵՆԿՈ	ՄԱՎԶԵՆԿՈ
ԿՈՎՈՒԽԻՆՈՎ	ՄԱԼԻՆԱ	

ՈՒԿՐԱՅԻՆԱՑԻ ԿՈՄԿՈՒՄԻ (ԲՈՒԵՎԵԿԻՆԵՐԻ ԴՆԵՊՐՈՊԵՏՐՈՎԱԿԱՎ ՄԱՐԶԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Մ. ԽԵՂԱԹԵՎԿԻ ԴՆԵՊՐՈՊԵՏՐՈՎԱԿԱՎ ՄԱՐԶԿՈՄԻ Դ. ԳԱՎՐԵԼՈՎ)

## ԳՆԵՄՐՈՄԵՏՐՈՎԱԿԱՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ

ԳԱԳԻԿ Ն.	ԳԻՎՈՎ ԴՐՈՎ	ԴՈՎԲՆԵԱ
ՈՒԿՈՒՅՎ	ԶԵԿԻՆՈՒԿԻ	ՄԱՐԶԵՆԿՈ
ԿՈԶԵՑԿՈՎ	ԽԻԺԵՑ	ԳՐՑԱԴԿՈ
ՏԻՒ	ՏԿԱՋԵՆԿՈ	



Ответ. редактор Г. А. Потенц  
Пом. техред. Д. М. Джинибалаян

Издание № 79|4939 С—Х. Сдано в набор 29 февраля 1936 г. Подпи-  
сано в печать 18 марта 1936 г. Формат - 136x198, Об'ем  
2 п. л. (49.000 зн. в. 1 б. л.). Тираж 2000. Уполномочит 00 — 11460.  
Заказ № 1086

Типография им. Стакки 1902 года в г. Ростов н.Д.,

ՀՀ Ազգային գրադարան



NL0204782

4665  
Цена 25 коп.

29.7.08

1  
809

ДОГОВОР НА СОЦИАЛИСТИЧЕСКОЕ  
СОРЕВНОВАНИЕ КОЛХОЗОВ И  
СОВХОЗОВ АЗОВО-ЧЕРНОМОРЬЯ И  
ДНЕПРОПЕТРОВЩИНЫ

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ  
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО  
Ростов н.Д Буденновский пр, № 30

Ф. О. Ф. О. З. Б. У. В. Г.  
Խառնով-Դոմ, Մակագակայիշ № 58  
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԿԳՈՑԵՆՏՐ)